

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ.
ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԴԵԿ. ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Վանաձոր համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգը.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի ն կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2011 թվականի թիվ 21 որոշումն իր փոփոխություններով ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ա.Հովհաննիսյան

3. «Վանաձորի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.՝ Կ.Պառավյան

4. Վանաձոր համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողակտորների նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

5. Բաբկեն Մխիթարյանին տարածք հանձնելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

6. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 21 ՈՐՈՇՈՒՄՆ ԻՐ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎՀԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարության 02.06.2016 թվականի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631- Ն որոշմամբ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը՝

- | | | |
|------------------------------|---|---|
| Բաղյան Գոռ Կառլենի | - | հանձնաժողովի նախագահ, համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ |
| Գևորգյան Լեոնուհի Սերգեյի | - | հանձնաժողովի քարտուղար, համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ |
| Վարոսյան Ռուդիկ Միշայի | - | ՀՀ ոստիկանության ԼՄ վարչության Վանաձորի Տարոնի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ |
| Կարապետյան Աշոտ Վարշամի | - | համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ |
| Հովհաննիսյան Արևհատ Մարտունի | - | համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար |
| Շահվերդյան Մարգարիտա Ստեփանի | - | ՎՊՀ-ի դոցենտ, որակի ապահովման կենտրոնի ղեկավար, «Առավոտ» ՀԿ-ի նախագահ |

Քալանթարյան Գայանե Սեյրանի - Լոռու մարզի հոգեոյարդաբանական դիսպանսեր ՊՓԲԸ -ի տնօրեն, համայնքի ավագանու անդամ

Ասրյան Սվետլանա Ժորայի - Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

Ավետյան Արմեն Մացակի - Վանաձորի համայնքապետարանի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնի պետի տեղակալ

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ավագանու 2011թվականի մայիսի 10-ի «Վանաձոր համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 29-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 105 որոշումը ուժը կորցրած ճանաչելու ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու մասին» թիվ 21 որոշումն՝ իր փոփոխություններով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

«ՎԱՆԱՁՈՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ,
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊԱՌԱՎՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Վանաձորի Սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

Հաստատված է Վանաձոր համայնքի ավագանու
_____ 2017թ. թիվ _____ որոշմամբ

<<Վանաձորի Մպասարկում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության
2017 թվականի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափեր

Դրույքների թիվը՝ 4				
Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Ամսական աշխատավարձի ֆունդը (դրամ)
1	2	3	4	5
1		1	109000	109000
1	Տնօրեն	1	72752	72752
2	Գործավար- գանձապահ	1	72752	72752
3	Պահակ /ցերեկային/	1	77904	77904
4	Բանվոր	4.0		332408
Ընդամենը				

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ
ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԴՔԵԿ. ՍՈՒՐԵՆ ԱՐՈՎՅԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06.10.2017թ. թիվ 061/8744 գրությունը, ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 126 եզրակացությունը և Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, Վանաձոր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող

ա. բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերից՝ 0.1169 հա, այդ թվում՝

- 06-001-0511-0019 կադաստրային ծածկագրից 0,0672 հա,
- 06-001-3507-0004 կամ 0511-0018 կադաստրային ծածկագրից 0,0497 հա,
- բ. բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից 1.14896 հա, այդ թվում՝
- 06-001-0511-0056, 0057, 0073 կադաստրային ծածկագրից 1.11376 հա,
- 06-001-3507-0004 կադաստրային ծածկագրից 0,0128 հա,
- 06-001-0511-0078 կադաստրային ծածկագրից 0,0224 հա
- գ. Պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից՝ 1.0677 հա թփուտ, այդ թվում՝
- 06-001-3507-0004 կադաստրային ծածկագրից 0.806 հա,
- 06-001-3507-0001 կադաստրային ծածկագրից 0,0077 հա,
- 06-001-3507-0002 կադաստրային ծածկագրից 0,13 հա
- 06-001-3507-0005 կադաստրային ծածկագրից 0,124 հա

փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող տասներորդ օրվանից:

«Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված «Համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)

«Հոռու մարզի Վանաձոր համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ



1. Հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը «Հոռու մարզի Վանաձոր համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասերի առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը
0.1169 հա հողամասերի բնակավայրերի նպատակային՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 1.14896 հա հողամասերի բնակավայրերի նպատակային՝ այլ հողերի գործառնական նշանակության, 1.0677 հա անտառային հողերի՝ թփուտներ նպատակային նշանակության	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների գործառնական նշանակության

2. Հանձնաժողովը նշում է, որ կառուցապատման հետագա գործառույթները պետք է իրականացվեն «Հ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես, ապահովելով ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Վանաձոր համայնքի ղեկավարին առաջարկվում է.

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխություններն արտացոլել համայնքի հերթապահ քարտեզում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Վանաձոր համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
«Հ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ	 Ա. Բադալյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
«Հ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ	 Ա. Հախումյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

_____ N _____

**ՀՀ Լոռու մարզ,
Վանաձոր համայնքի ղեկավար՝
պարոն Մամիկոն ԱՍԼԱՆՅԱՆԻՆ**

2017 թվականի հոկտեմբերի 6-ի
N 061/8744 գրություն

Հարգելի պարոն Ասլանյան

Ձեզ է տրամադրվում ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության՝ 0.1169 հա հողամասերի բնակավայրերի բնակելի կառուցապատման, 1.14896 հա հողամասերի բնակավայրերի այլ հողերի, 1.0677 հա անտառային հողերի նպատակային նշանակությունները՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային և կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության դասակարգելու վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի հերթապահ քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:


Առդիր՝ 3 թերթ:


Հարգանքով՝

Արամ ԲԱՂԱԼՅԱՆ

ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հասցե՝ ք. Վանաձոր





ՆԱԽԱԳԻԾ ԵՎ Ա Ա ՏՀ

ԲԱՔԿԵՆ ՄԻՒԻԹԱՐՅԱՆԻՆ ՏԱՐԱԾՔ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԴՔԵԿ. ՎԱՀԱԳՆ ԴԱՎԻԹԱՎՅԱՆ

Հիմք ընդունելով «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Բաբկեն Մխիթարյանի 16.11.2017թ. թիվ 066/7174 դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է


1. Տիգրան Մեծի պողոտայի թիվ 22 հասցեում գտնվող համայնքապետարանի շենքի առաջին հարկի 37.5քմ մակերեսով տարածքը, համաձայն հավելվածի, 3 տարի ժամկետով վարձակալության հանձնել «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Բաբկեն Մխիթարյանին, որպես աշխատանքային գրասենյակ՝ վարձավճարի չափ սահմանելով 1քմ-ի համար 1200/հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ մեկամսյա ժամկետում Բաբկեն Մխիթարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

CHIEF ENGINEER'S OFFICE

2nd FLOOR



$S = 37.5 J^2$

ՆԱԽԱԳԻԾ ԻՐԱՎԱԲԱՆ

ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017թ. դեկտեմբերի -ը: